իմ այն որ փրկի պարտ է կատարումն առնուլ որպէս հասարակաց սովորութիւնն, այնու հետ այս տուգանագիրն անարժան կլինի և անկարող, եթէ կատարումն սորին անդրադարձն կլինի յանժամ 'ի վեր յիշեցեալ տուգանն ամենայն կերպիւ արժանաւոր կլինի և կարող, թուղթս զերծապարտից իրեք միմեանց համեմատ ովի միայն մինն 'ի սոցանէ ունի արժողութիւն, որմնոցն որ հատուցումն առնեմ մնացորդ երկուսն անարժան լինիցի։

Վկայեմք որ ձեռնադրեաց, կնքեաց և յանձնեաց.

Մանասէ որդոյ Սիմէոնի.

Մարկոս որդոյ Ղևոնդի

Վրթանէս որդոյ Միքայէլի.

Օրինակ Տուն կամ Երկիր գնելոյ։

ԳԼՈՒԽ ՀԹ.

Յայտնի լինի ամենեցուն, որ ես Մարտիրոս որդոյ Բաղրամի յաշխարհէն աղձնու և 'ի գաւառէն պատիկու 'ի գեղջէն փէրիրու վաճառեսցի տունն իմ որ կայ կազմեալ 'ի փողոցն վարդանեանց դրկից Մարտիրոսի որդոյ Մնացականի հարաւ կոյս, և Փիլիպպոսի որդոյ Ղա-